Արձանագրություն N 2

«ՀԱՃ-ՇՀԱՊՁԲ-15/8-2016/1-» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի հայտերի գնահատման նիստի

ք.Երևան «1» նոյեմբերի 2016 թ.
ժ. 11.00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Հ. Սարգսյանը

Հանձնաժողովի անդամներ՝ Ն. Մարգարյանը, Մ. Կարապետյանը

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Սարգսյանը

1. Շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտերի բացման մասին

(Հ. Սարգսյան)

1.1. Ընդունել ի գիտություն, որ.

ա) սահմանված ժամկետում և սահմանված կարգի պահանջներին համապատասխան հայտեր են ներկայացրել հետևյալ ընկերությունները.

1. «Կոմպասս» ՍՊԸ	ք. Երևան, Չարենցի 66/Սայաթ-Նովա 15, հեռ. (+374) 10 52-37-37
2. «Էդվարդ Քոմփյութերս» ՍՊԸ	ք. Երևան, Սայաթ-Նովա 33-79, հեռ. 58 85 81
3. «Կոմպյուտր Սերվիս» ՍՊԸ	ք. Երևան, Սարյան փող., 10 շենք, 1-2 տարածք, հեռ. 10 58-64-43
4. «Կոմպմարկետ» ՍՊԸ	ք. Երևան, Դավթաշեն 4-րդ թաղ, 2 բ շենք, 45 բն., հեռ 10 542931
5. «Պատրոն ՌՄ» ՍՊԸ	ք. Երևան, Վարդանանց 18/2, հեռ. 544-346, 544-348
6. «Սեգ» ՍՊԸ	ք. Երևան,Սարկավագի72/2, բն. 18, հեռ. 011-36-90-00

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

1.2. **Հրավերով սահմանված՝ ծրարների կազմման և ներկայացման, բացված ծրարում հրավերով (ծանուցումով) պահանջվող փաստաթղթերի առկայության և ընթացակարգի հրավերով (ծանուցումով) սահմանված պայմաններին համապատասխանելու վերաբերյալ** (Հ. Սարգսյան):

Մասնակիցների կողմից ներկայացված ծրարները կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկի ծրարները պարունակում են

- ՇՀ միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու դիմումը,
- հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը
- մասնագիտական փորձառության մասին հայտարարությունը,
- տեխնիկական միջոցների մասին հայտարարությունը,
- ֆինանսական միջոցների մասին հայտարարությունը,
- աշխատանքային ռեսուրսների մասին հայտարարությունը,
- գնային առաջարկ՝ ինքնարժեքի, շահույթի և ԱԱՀ-ի հաշվարկով,
- հայտարարություն առաջարկվող ապրանքների հրավերով նախատեսված բնութագրերին համապատասխանության վերաբերյալ

Փաստաթղթերը կազմված են բնօրինակից և երկու օրինակ պատճեններից: Բոլոր փաստաթղերը կնքված և ստորագրված են մասնակցի կողմից:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

1.3 **Ընթացակարգի մասնակիցների առաջարկած գնային առաջարկները ներկայացված են հավելված 1-ում**

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

1.4. Հանձնաժողովը որոշեց.

ա)

- 1, 6 չափաբաժիններով հաղթող ճանաչել «Կոմպմարկետ» ՍՊԸ-ին

- 2 չափաբաժնով հաղթող ճանաչել «Կոմպյուտր սերվիս» ՍՊԸ-ին

- 3 չափաբաժնով հաղթող ճանաչել «Կոմպասս» ՍՊԸ-ին

- 5 չափաբաժնով հաղթող ճանաչել «ՍԵԳ» ՍՊԸ-ին

- 7,8 չափաբաժիններով հաղթող ճանաչել «Պատրոն» ՍՊԸ-ին

-9 չափաբաժնով հաղթող ճանաչել ««Էդվարդ Քոմփյութերս» ՍՊԸ-ին

բ) 4-րդ չափաբաժնի (սնուցման բլոկ) համար գնային առաջարկ են ներկայացրել միայն «Էդվարդ Քոմփյութերս» ՍՊԸ-ն (**30000** ՀՀ դրամ, առանց ԱԱՀ), «Կոմպմարկետ» ՍՊԸ-ն (**30000** ՀՀ դրամ, առանց ԱԱՀ) և «Պատրոն» ՍՊԸ –ն (**47400** ՀՀ դրամ, առանց ԱԱՀ): Առաջարկված գների նվազեցման նպատակով ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի ա)

ենթակետի համաձայն ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր նշված մասնակիցների հետ վարել միաժամանակյա բանակցություններ, այդ մասին նրանց համապատասխան ծանուցում ուղարկելով: Բանակցությունները վարվելու են ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից հաշված երկրորդ աշխատանքային օրը (2016թ. նոյեմբերի 3-ին):

գ) Քանի որ ընթացակարգի տարբեր չափաբաժիններով բոլոր վեց մասնակիցները հաղթող են ճանաչվել (**1.4 կետի ա) ենթակետ**), ուստի ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի 1-ին մասի համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել նրանց վերաբերյալ՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտերը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների մասին եզրակացություն ստանալու համար:

դ) Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից նշված ընկերությունների վերաբերյալ եզրակացության ստացման հաջորդ օրը և ընտրված կազմակերպություններին ծանուցել գնահատող հանձնաժողովի որոշման մասին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Հ. Սարգսյան

Անդամներ՝ _____ Ն. Մարգարյան

_____ Մ. Կարապետյան

Քարտուղար՝ _____ Ա. Սարգսյան

Հավելված 1

Ընթացակարգի մասնակիցների առաջարկած գնային առաջարկները

/ՀՀ դրամ/

	Ապրանքի անվանումը	«Կոմպասս» ՍՊԸ	«Էդվարդ Քոմփյութերս» ՍՊԸ	«Կոմպյուտեր սերվիս» ՍՊԸ	«Կոմպմարկետ» ՍՊԸ	«Պատրոն» ՍՊԸ	«ՍԵԳ» ՍՊԸ
		Գինը առանց ԱԱՀ	Գինը առանց ԱԱՀ	Գինը առանց ԱԱՀ	Գինը առանց ԱԱՀ	Գինը առանց ԱԱՀ	Գինը առանց ԱԱՀ
1	Քարտրիջ	**43875**	**56250**	**-**	**42900**	48450	39000
2	Տոներային քարտրիջ	**-**	**-**	**92220**	**-**	-	-
3	Քարտրիջ	**27500**	**36667**	**-**	**28583**	33950	-
4	Սնուցման բլոկ	**-**	**30000**	**-**	**30000**	47400	-
5	Անխափան սնուցման աղբյուր	**300000**	**272833**	**-**	**270000**	274750	200000
6	Համակարգչային մկնիկ	**-**	**11000**	**-**	**10200**	13950	15000
7	Տոներ	**-**	**-**	**-**	**26400**	11100	29000
8	Ֆլեշ հիշողություն	**-**	**13083**	**-**	**13700**	11250	-
9	Օպերատիվ հիշողություն	**-**	**50833**	**-**	**53500**	76667	75000

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Շահերի բախման բացակայության մասին

ք.Երևան 1 նոյեմբերի 2016 թ.

«ՀԱՃ-ՇՀԱՊՁԲ-15/8-2016/1-» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Հ. Սարգսյանս, անդամներ՝ Ն. Մարգարյանս և Մ. Կարապետյանս «ՀԱՃ-ՇՀԱՊՁԲ-15/8-2016/1-» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման նիստից հետո «Գնումների մասին» ՀՀ օրենքի հոդված 30-ի 6-րդ կետի համաձայն հայտարարում ենք, որ գնման առարկայի ձեռքբերման ընթացակարգի առնչությամբ չունենք շահերի բախում:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Հ. Սարգսյան

Անդամներ՝ _____ Ն. Մարգարյան

_____ Մ. Կարապետյան